ԿԱՐԾԻՔ

Արման Ստեփանի Նալբանդյանի

«Սյունիքի ուշմիջնադարյան նյութական մշակույթը (ըստ վերջին տարիների պեղումների արդյունքների)» թեմայով ատենախոսության մասին

Է. 00.03 «Հնագիտություն» մասնագիտությամբ պատմական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի համար

Հայաստանի ուշ ուշմիջնադարյան կամ նոր բնութագրմամբ՝ վաղ արդի շրջանի մշակույթն ընդհանրապես, և նյութական մշակույթը՝ մասնավորապես, սակավ ուսումնասիրված ասպարեզ է, ուստի ներկա ատենախոսության թեմայի ընտրությունն արդեն իսկ շահեկան ու արդիական է: Բայց ավելի կարևոր է, որ այս աշխատանքը շարադրվել է հեղինակի՝ Սյունյաց աշխարհի տարբեր վայրերում տարիներ ի վեր իրականացրած պեղումների արդյունքների և գտածոների ուսումնասիրության հետազոտական հարուստ բազայի վրա: Հենց դրանով էլ լիարժեքորեն ապահովվում է այս աշխատության բերած գիտական նորույթը, որը բազմաշերտ է՝ սկսած նորահայտ հուշարձաններից մինչև բազմապիսի պեղածո նյութերը, որոնք ներկայացվում են համապատասխան ուսումնասիրությամբ:

Ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, չորս գլուխներից և եզրակացությունների բաժնից, օգտագործված աղբյուրների և գրականության ցանկից, միաժամանակ, ունի ծավալուն հավելված:

Առաջին գլուխը Սյունիքի պատմաաշխարհագրական համառոտ ակնարկ է, երկրորդում ներկայացվում են պեղված հուշարձանները, պեղումների պատմությունն ու արդյունքները, երրորդում՝ պեղումներով հայտնաբերված ուշմիջնադարյան հուշարձանները, քարակոթողները և դրանց արձանագրությունները: Չորրորդ գլուխը նվիրված է պեղումներից հայտնաբերված գտածոներին՝ կենցաղային և ծիսական բազմատեսակ ու բազմազան առարկաներին: Բոլոր բաժինները շարադրված են անհրաժեշտ գիտական չափանիշների պահպանմամբ: Վերջում՝ «Եզրակացություններ» բաժնում հեղինակը 18 կետերով, որոնցից մի քանիսում նաև մի շարք ենթակետերով՝

ամփոփում է իր հետազոտության արդյունքները: Ողջ ատենախոսությունը բաղկացած է 185 էջից:

Հատուկ ուշադրության է արժանի նաև խնամքով կազմված և գրեթե նույն ծավալի հավելվածը, որտեղ ներկայացված են հուշարձանների և գտածոների լուսանկարներ, գծագրեր, գրչանկարներ, գծապատկերներ, լաբորատոր հետազոտական տախտակներ, գտածոների դասակարգման աղյուսակներ և այլն:

Ատենախոսության հիմնական առավելությունը գործնական աշխատանքի՝ պեղումների արդյունքների վրա հիմնված լինելն է: Սակայն պետք է նշել, որ հեղինակը անհրաժեշտ չափով օգտագործել է նաև աղբյուրագիտական նյութեր և մասնագիտական լայն գրականություն:

Ատենախոսության կարևոր ձեռքբերումներից է Սյունիքում ուշմիջնադարյան եկեղեցաշինության և վանքերի ու անապատների կառուցման հատակագծային և շինարարական առանձնահատկությունների վերաբերյալ ուշագրավ դիտարկումներն ու համոզիչ եզրահանգումները (տե՛ս «Եզրակացություններ», կետ 5-12, էջ 162-166):

Սյունիքի պատմության՝ աշխատության մեջ քննվող ժամանակաշրջանը, հեղինակն իրավացիորեն բնորոշում է որպես վերազարթոնքի փուլ: Նա գրում է. «17-18-րդ դդ. - Վերազարթոնքի փուլ, երբ եկեղեցաշինությանը զուգընթաց նկատվում է շինարարական բուռն վերելք, ինչի հետ փոխկապակցված զարգանում են տնտեսությունն ու արհեստները, մասնավորաբար՝ խեցեգործությունը, մետաղագործությունը և այլն: Այս զարգացման դրսևորումը ստանում է համատարած բնույթ, սկսում է ընդունել տեխնոլոգիական և տիպաբանական օրինաչափություններ, որոնք և ի վերջո կերպավորում են ուշմիջնադարյան ժամանակաշրջանը՝ իր ողջ արտահայտչականությամբ ու առանձնահատկություններով» (էջ 169): Ատենախոսության ողջ շարադրանքը այս բնութագրման փաստական հիմնավորումն է:

Ընդհանրապես, առանձին մանրամասների չանդրադառնալով, պետք է արձանագրեմ, որ ներկայացված ատենախոսությունը հարուստ նյութ ընդգրկող և գիտահետազոտական չափանիշներով շարադրված միանգամայն հաջող աշխատություն

է, որը կարևոր ներդրում է Սյունիքի ուշմիջնադարյան նյութական մշակույթի ուսումնասիրության ասպարեզում, և որի հեղինակն անկասկած արժանի է դրվատանքի։

Որպես պատմաբան-աղբյուրագետ, առանձնապես կարևորում եմ եկեղեցիների պատերի, խաչքարերի և տարբեր կոթողների ու առարկաների վրա եղած բազմաթիվ արձանագրությունների հրապարակումը։ Թեև դրանց մեծ մասը կարճ գրություններ են, սակայն անկասկած կարևոր են։ Լավ կլիներ, եթե ատենախոսության եզրակացությունների բաժնում, որը նաև աշխատանքի ամփոփումն է, հեղինակը նշեր, թե քանի՞ անտիպ արձանագրություն է հրապարակել այս աշխատության մեջ։

Մի քանի դիտողություն՝ ատենախոսության վերաբերյալ։

1. Առաջաբանում հեղինակը գրում է. «Սյունիքի պատմության և հուշարձանների ուսումնասիրության սկզբնաղբյուրները կարելի է բաժանել երեք խոշոր խմբերի

ա/ Մատենագրական հաղորդումներ,

բ/ Ճանապարհորդական ուղեցույցներ,

գ/ Վիմական արձանագրություններ» (էջ 9)։

Այնուհետև նա անդրադառնում է այդ աղբյուրներին, որոնք անկասկած հիմնարար նշանակություն ունեն։ Սակայն Սյունիքի պատմության նշված ժամանակաշրջանի համար շատ կարևոր սկզբնաղբյուրներ են նաև հայերեն ձեռագրերի 17-րդ դարի հիշատակարանները, որոնց նյութն, ըստ իս, անհրաժեշտ չափով նկատի չի առնվել։ Պատահական չէ, որ ատենախոսության օգտագործված աղբյուրների և գրականության ցանկում նշված է (և ըստ էության՝ աշխատության մեջ վկայակոչված է) Վազգեն Հակոբյանի կազմած «Հայերեն ձեռագրերի ԺԷ դարի հիշատակարաններ» ստվարածավալ եռահատորի միայն երկրորդ հատորը (Երևան, 1984), որն ընդգրկում է 1641-1660 թվականները։ Մեր խորհուրդն է հեղինակին, որ թեմայի հետագա մշակման-զարգացման ընթացքում ավելի կարևոր տեղ հատկացնի հիշատակարանային աղբյուրագիտական նյութին։

2. Սյունիքի վանքերի ծաղկման ժամանակաշրջանի մասին ատենախոսը գրում է. «Սյունյաց աշխարհում եկեղեցաշինության բարձրակետը հանդիսանում են 10-13-րդ դդ., երբ Բագրատունյաց թագավորության ու Սյունյաց իշխանության, ապա՝ Սյունյաց

թագավորության ժամանակաշրջանում մեկը մյուսի ետևից վեր են խոյանում Տաթևը, Թանահատը, Կոթավանքը, Վահանավանքը, Բղենո Նորավանքը, Որոտնավանքը, Ամաղուի Նորավանքը և այլ ճարտարապետական ու հոգևոր-մշակութային գլուխգործոցներ» (էջ 18):

Այստեղ պետք է նկատեմ, որ Սյունիքը Հայաստանի այն եզակի երկրամասն է, որտեղ հայկական եկեղեցաշինությունը զարգացել է ընդհուպ մինչև 14-րդ դարի առաջին կեսը և այս հանգամանքը առանձնակի շեշտման կարիք ունի: Մասնավորապես, հենց 14-րդ դարի առաջին կեսում են ստեղծվել Օրբելյանների հովանավորությամբ Մոմիկի կառուցած եկեղեցիները՝ Նորավանքի Բուրթելաշեն Ս. Աստվածածինը և Արենիի եկեղեցին, Եղեգիսի Զորաց տաճար անունով հայտնի եկեղեցին, Պռոշյանների հիմնած Սպիտակավոր Սուրբ Աստվածածինը: Եվ ընդհանրապես, այդ ժամանակաշրջանը՝ 14-րդ դարի առաջին կեսը, Սյունիքի հոգևոր և կրթամշակութային կյանքի պատմության մեջ մի «ոսկեդար» կարելի է համարել, որը կապված էր Գլաձորի համալսարանի և ուսումնակրթական ավանդ ունեցող այլ վանքերի՝ Հերմոնի և Վերին Նորավանքի գործունեության հետ:

3. Մի անհստակ ձևակերպում է տեղ գտել առաջաբանում (էջ 6)՝ «Սյունիքում գունավոր մետաղների արտահանման ընթացքում արտահանվել են նաև տասնյակ միլիոն խորանարդ քարանյութ, ինչը ևս հաստատում է Սյունիքում բազալտի, գրանիտի հարուստ պաշարներ լինելու փաստը» (հղված է Ս. Մելքումյանի՝ «Քարը մեր հարստությունն է», գիրքը, 1985, էջ 23): Այստեղ նախ, կարծում եմ, որ վրիպակ կա՝ պետք է լինի «խորանարդ մետր», մյուս կողմից, եթե նկատի ունի ուշ միջնադարը, ինչին վերաբերում է նախընթաց շարադարանքը, ապա դա հիմնավորում չունեցող տեղեկություն է, իսկ եթե մե՛ր ժամանակների մասին է, այնքան էլ չի կապվում աշխատության թեմային:

Մասնավոր հարցերի վերաբերող այս դիտողությունները, բնականաբար, բոլորովին չեն նվազեցնում կատարված աշխատանքի արժեքը: Այն իսկապես հսկայական փաստական և հետազոտական նյութ ընդգրկող, բարեխիղճ աշխատասիրությամբ

ստեղծված գնահատելի աշխատություն է, որը, կարծում եմ, որոշ լրացումներից հետո, արժանի է նաև հրատարակության:

Ավելացնեմ, որ հեղինակն իր ղեկավարությամբ կամ մասնակցությամբ կատարված պեղումների արդյունքների վերաբերյալ հրատարակել է համապատասխան հոդվածներ, զեկուցումներ կարդացել միջազգային և հանրապետական գիտաժողովներում, այսինքն, նյութն անցել է նաև գիտական որոշակի փորձաքննություն:

Սեղմագրում ներկայացված դրույթները և հեղինակի տպագրած աշխատանքները համապատասխանում են ատենախոսության բովանդակությանը:

Ամփոփելով պետք է նշեմ, որ հրապարակային պաշտպանության ներկայացված ատենախոսությունը ամբողջական պատկերացում է տալիս Սյունիքի ուշմիջնադարյան նյութական մշակույթի մասին, շրջանառության մեջ է դնում մեծ ծավալի հնագիտական նորահայտ նյութեր, վիմագրեր և այլն, և այդ ամենը ներկայացվում է գիտական համապատասխան վերլուծություններով: Ատենախոսությունը լիովին բավարարում է թեկնածուական ատենախոսություններին ներկայացվող պահանջները:

Ելնելով վերը շարադրվածից միջնորդում եմ մասնագիտական խորհրդի առաջ Արման Ստեփանի Նալբանդյանին «Սյունիքի ուշմիջնադարյան նյութական մշակույթը (ըստ վերջին տարիների պեղումների արդյունքների)» Է. 00.03 «Հնագիտություն» մասնագիտությամբ ատենախոսության համար շնորհել պատմական գիտությունների թեկնածուի գիտական աստիճան:

Պաշտոնական ընդդիմախոս՝ Կարեն Մաթևոսյան
պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր
Մեսրոպ Մաշտոցի անվ. Մատենադարանի
Գրչության կենտրոնների ուսումնասիրման բաժնի վարիչ

Պ.գ.դ. Կարեն Մաթևոսյանի ստորագրությունը հաստատում եմ
Մեսրոպ Մաշտոցի անվ. Մատենադարանի
գիտական քարտուղար Վահե Թորոսյան
07.07. 2025 թ.